ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3
<<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

_22_սեպտեմբեր _2021թ._
ժամը _$10^{30}$_

ք. Եղվարդ

Մասնակցությամբ՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հարությունյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Զաքարյան (ԳՊ/ԳԱ)
Ն. Արշակյան (ԳՊ/ԳԱ)
Ս. Նիկողոսյան (ԳՊ/ԲԱ)
Գ. Խալաթյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ. Վիրաբյան (ԳՊ/ՄՀմ)

1. <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի N3 չափաբաժինը չկայացած հայտարարելու և մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին.

1.1 Եղվարդ համայնքի կարիքների համար գույքի ձեռքբերման նպատակով հայտարարված <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի N3 չափաբաժնի (հանդիսությունների սեղան աթոռներով (մեկ սեղան 2 աթոռ))մասով ընտրված մասնակից է ճանաչվել Գոռ Շեկոյան Ա/Ձ-ն: <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով ընթացակարգի անգործության ժամկետը ավարտվել է 28□08. 2021թ. ժամը 00:00-ին, հաղթող ճանաչված մասնակից՝ Գոռ Շեկոյան Ա/Ձ-ին պայմանագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք պայմանագրի նախագիծը ուղարկվել է 30. 08. 2021թ.-ին:

1. 2 <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: 13. 09. 2021թ. -ին լրացել է Գոռ Շեկոյան Ա/Ձ-ի կողմից պայմանագիր կնքելու ժամկետը, ուստի Գոռ Շեկոյան Ա/Ձ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

1. 3 Հաշվի առնելով սույն արձանագրության 1.1 և 1.2 կետերը <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց.

- <<ԿՄԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-21/1>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ընթացակարգի N3 չափաբաժինը հայտարարել չկայացած:
- Մասնակից Գոռ Շեկոյան Ա/Ձ-ի վերաբերյալ փաստաթղթերը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0:

2. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները.

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Կ. Հարությունյան
*(ստորագրությունը)*

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Հ. Զաքարյան
*(ստորագրությունը)*

_____ Ն. Արշակյան
*(ստորագրությունը)*

_____ Ս. Նիկողոսյան
*(ստորագրությունը)*

_____ Գ. Խալաթյան
*(ստորագրությունը)*

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Վ. Վիրաբյան
*(ստորագրությունը)*